



**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

«24» հուլիսի 2016թ.

N310-Ն

ք. Ստեփանակերտ

**2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ ենթակետի պահանջով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել 2016-2017 ուսումնական տարվա 12-րդ դասարանների սովորողների պետական ավարտական քննությունների անցկացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:
2. ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Գրիգորյանին՝ հաստատված ժամանակացույցը տպագրել «Լուսարար» պաշտոնաթերթի առաջիկա համարում և տեղադրել նախարարության կայքէջում:
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության հանրակրթական վարչության բաժնի պետ Ռ. Մուսայեյանին:

Ս.ԱՍՐՅԱՆ

Հավելված՝
 ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի
 նախարարի 310-Կ 24/ԿՆ 2016թ.
 N 316/Կ հրամանի

**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ 12-ՐԴ
 ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ԱՆՑԿԱՑՄԱՆ**

ԱՌԱՐԿԱ	ՕՐԵՐ
«Հայոց լեզու և հայ գրականություն» /գրավոր/	2016 թվականի դեկտեմբերի 26-ին
«Մաթեմատիկա» /գրավոր/	2016 թվականի դեկտեմբերի 28-ին
«Հայոց պատմություն» /գրավոր/	2016 թվականի դեկտեմբերի 29-ին
«Ռուս գրականություն» /բանավոր/ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար՝	2016-2017 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում
«Ֆիզկուլտուրա» /ամփոփիչ ստուգարք/	2016-2017 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ուսումնական պարապմունքների վերջին շաբաթվա ընթացքում